ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՇՀԾՁԲ-9/1-2

ք. Երևան 12-ը հունիսի 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Բ. Թադևոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի № 2 հավելվածով սահմանված Գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2.Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. Ծառայության հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված № 4.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված № 4):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ծառայությունը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 3.2-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. Պայմանագրի գինը

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 14,640,000 (տասնչորս միլիոն վեց հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի № 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն,

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի №№ 1, 2, 3, 4 և 4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.10 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.12 Պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է **ՀՀ ՊՆ ՌԲ վարչությունը**:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Արզումանյան 32/10
ՀՀ ֆինանսների նախարարության	«Էյչ-Էս-Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 217-002-182558-001
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 01210095
ՀՎՀՀ 00867415	Տնօրեն
ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված № 1
№ ՇՀԾՁԲ-9/1-2 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժնի համարը	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	
	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
2	**Արյան ստերիլության որոշման սարք BactAlert 3D-սպասարկում և նորոգում**	
2.1	Սարքի ներկառուցված համակարգչի փոխարինում, որը ներառում է՝ սենսորային էկրանի փոխարինում, պրոցեսորի փոխարինում, կրիչի փոխարինում USB տեսակի: Բջջիջների ստուգում. Մեխանիկական մասերի քսուկապատում. Սարքի վերածրագրավորում և կարգաբերում: Սարքի աշխատանքի ստուգում: Սարքի ընդհանուր փոշազերծում:	
2.2	Անհրաժեշտ պահեստամասեր՝	
	Սարքի ներկառուցված համակարգիչ	
3	**Անալիզատոր Roche Cobas 6000-սպասարկում և նորոգում**	
3.1	Սարքի ընդհանուր փոշազերշում: Սարքի կարգաբերում ըստ հարթության: Տեղափոխման համակարգի կարգաբերում:: Վնասված խողովակների փոխարինում: Ջրի սնուցման համակարգի ուլտրամանուշակագույն լամպի փոխարինում, Մուտքային ջրի խողովակների փոխարինում: Ներքին խողովակների փոխարինում: Էլեկտրոլիտների բլոկի խողովակների փոխարինում: Մուտքային Ջրի բոլոր խողովակների փոխարինում: Չափիչ բջջիջների մագնիսների կարգաբերում: c501 մոդուլի զննում, շարժական մասերի կարգաբերում և ամրապնդում: Նմոշառման ասեղի կարգաբերում, մակարդակի զգայունության կարգաբերում: Ազդանյութերի ասեղների կարգաբերում ըստ հարտության, մակարդակի զգայունության կարգաբերում: Ազդանյութերի կասետների տրանսպորտային մեխանիզմի կարգաբերում: Նմուշառման սկավառակի, չափիչ համակարգի սկավառակի ստուգում և կարգաբերում: Բիոքիմիական մոդուլի աշխատանքի ստուգում հատուկ ստանդարտիզացված հեղուկների միջոցով: e601 մոդուլի զննում, շարժական մասերի կարգաբերում: Նմուշառման ասեղի կարգաբերում, մակարդակի զգայունության կարգաբերում: c501 մոդուլի աշխատանքային կայանի ասեղների հավաքաի փոխարինում իրենց ներդիրների հետ: Շարժման սենսորների փոխարինում: Ազդանյութերի խառնիչի կարգաբերում, և պտույտների ստուգում: Ազդանյութերի սկավառակի և ինկուբատորի սկավառակի ստուգում և կարգաբերում: Բոլոր շարժական մասերի քսուկապատում: Սարքի աշխատանքի ստուգում հատուկ ստանդարտիզացված հեղուկների միջոցով: Roche Cobas 6000 անալիզատորի համար նախատեսված RBC 44 անխափան սնուցման մարտկոցի տեխնիկական զննում, վնասված մասերի փոխարինում, մարտկոցների մոդուլի վերանորոգում, անխափան սնուցման սարքի կարգաբերում, Cobas 6000 անալիզատորի հոսանքի համակարգի կարգաբերում: Ընդհանուր համակարգի ստուգում ծանրաբեռնվածության թեսթի միջոցով: Սարքին կցված Medica R60 ջրի դեոնիզացման սարքի ֆիլտրերի փոխարինում:	
3.2	Անհրաժեշտ պահեստամասեր՝	
	Դեիոնիզատորի ֆիլտրերի հավաքածու (ներառում է 10 ֆիլտր)	
4	**Հեմատոլոգիական Անալիզատոր Sysmex pocH-100i-սպասարկում և նորոգում**	
4.1	Սարքի ընդհանուր փոշազերծում: Վթարված մխոցի, փականների, կոմպրեսորի և խողովակների փոխարինում: Ներքին տարրաների մաքրում: Լեյկոցիտների, էրիտրոցիտների, տրոմբոցիտների զգայության կարգաբերում հատուկ ստանդարտզացված հեղուկների օգնությամբ: Փականների փոխարինում: Ներդիրների և զտիչների փոխարինում: Հեմոգլոբինի և հեմատոկրիտի կարգաբերում Շարքից դուրս եկած խողովակների փոխարինում: Սարքի աշխատանքի և ճշգրտության ստուգում հատուկ 3 մակարդակի ստանդարտիզացված նյութերի միջոցով:	
4.2	Անհրաժեշտ պահեստամասեր՝	
	AG278808 Փական	
	AV199859 Փական	
	031-0112-4 Մխոց	
	013-2002-2 Կոմպրեսոր	
	023-1961-3 Զտիչ Համար 8	
5	**Ավտոմատ մեզի անալիզատոր SYSMEX UF-500-սպասարկում և նորոգում**	
5.1	Սարքի ընդհանուր զզնում և փոշազերծում: Պտտվող կերամիկական փականի մաքրում և կարգաբերում: Նմուշի տեղափոխման, նմուշառման համակարգի մաքրում և կարգաբերում: Նմուշառման խողովակների և ֆիլտրի հենակի փոխարինում: Կոմպրեսորի ստուգում, մաշվածության ենթարկված մասերի փոխարինում: Մխոցների ներդիրների փոխարինում, լազերի մխոցի փոխարինում: Վակուումի կարգավորիչի փոխարինում: Նմուշառման փականի փոխարինում: Օդային չորացուցիչի փոխարինում: Ներքին բոլոր տարրաների մաքրում և ստուգում: Սարքի աշխատանքի ստուգում հատուկ ստանդարտիզացված հեղուկների օգնությամբ:	

5.2	Անհրաժեշտ պահեստամասեր՝
	346-9357-8 Մխոցի նեդիր
	943-2234-1 Լազերի մխոց
	366-1473-5 Հենակ
	991-0542-3 Վակուումի կարգավորիչ
	443-1062-3 Նմուշառման փական
	443-2606-1 Օդային չորացուցիչ
	983-3151-5 Նմուշի ֆիլտր
	443-6865-6 Կոմպրեսորի խնամքի կոմպլեկտ
	443-6866-0 Կոմպրեսորի խնամքի կոմպլեկտ
6	**Հեմատոլոգիական անալիզատոր SYSMEX XT-4000i-սպասարկում և նորոգում**
6.1	Ընդհանուր օդի ֆիլտրի փոխարինում: Մաշվածության ենթարկված խողովակների փոխարինում: Մխոցների ներդիրների ստուգում և անհրաժեշտության դեպքում փոխարինում: Ներքին ջրի և թափոնի տարրաների մաքրում; Լեյկոցիտների, էրիտրոցիտների, տրոմբոցիտների զգայունության կարգաբերում հատուկ ազդանյութերի օգնությամբ: Հեմոգլոբինի և հեմատոկրիտի կարգաբերում: Լազերի ստուգում և անհրաժեշտության դեպքում կարգաբերում հատուկ նյութերի միջոցով: Ներքին արյան զտիչների վերանորոգում: Սարքի աշխատանքի ստուգում 3 մակարդակի ստանդարտիզավորված հեղուկների օգնությամբ: Ռետիկուլոցիտների չափման ալիքի վերանորոգում: Կոմպրեսորի մխոցների փոխարինում և կարգաբերում: Սարքի ծրագրային ապահովման թարմեցում: Սարքի ընդհանուր զզնում և փոշազերծում: Պտտվող կերամիկական փականի մաքրում և կարգաբերում:
6.2	Անհրաժեշտ պահեստամասեր՝
	AU651830 Օդի ֆիլտր
	443-1359-8 Արյան ֆիլտրN°8
	442-6483-4 Թափոնի խողովակ
	CA358738 Սիլիկոնե խողովակ 2x5
	BK603598 Սիլիկոնե խողովակ 3x6
	CC148318 Սիլիկոնե խողովակ 3x6.5
	442-5430-3 Տեֆլոնե խողովակ 3.2x 4.2
	442-5055-7 Պոլեուրետանային խողովակ 1.8x3.4
	943-2232-4 Մխոց Համար 8
	923-8851-9 Մխոց Համար 2
	132-741-6 Մխոց Համար FCM

Ծանոթություն Վերանորոգման ենթակա սարքավորումների տեղափոխումը վերանորոգման ծառայություն մատուցող կազմակերպություն իրականացվում է կազմակերպության միջոցով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊՁԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տնօրեն

ԿԱՏԱՐՈՂ
«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված № 2
№ ՇՀԾՁԲ-9/1-2 պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժնի համարը	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ	Չ/մ	Քանակ	Գին	Գումար	Գնման ժամանակացույց
						II - IV եռամսյակ Ըստ պատվիրատուի հայտերի ոչ ուշ քան 30.11.2017թ.
2	**Արյան ստերիլության որոշման սարք BactAlert 3D-ապասարքում և նորոգում**					
2.1	Սարքի ներկառուցված համակարգչի փոխարինում, որը ներառում է՝ սենսորային էկրանի փոխարինում, պրոցեսորի փոխարինում, կրիչի փոխարինում USB տեսակի: Բջջիջների ստուգում. Մեխանիկական մասերի քսուկապատում. Սարքի վերածրագրավորում և կարգաբերում: Սարքի աշխատանքի ստուգում: Սարքի ընդհանուր փոշազերծում:	հատ	1	720,000	720,000	1
2.2	Անհրաժեշտ պահեստամասեր՝				0	
	Սարքի ներկառուցված համակարգիչ	հատ	1	4,080,000	4,080,000	1
	ԸՆԴԱՄԵՆԸ				**4,800,000**	
3	**Անալիզատոր Roche Cobas 6000-ապասարքում և նորոգում**					
3.1	Սարքի ընդհանուր փոշազերշում: Սարքի կարգաբերում ըստ հարթության: Տեղափոխման համակարգի կարգաբերում:: Վնասված խողովակների փոխարինում: Ջրի սնուցման համակարգի ուլտրամանուշակագույն լամպի փոխարինում, Մուտքային ջրի խողովակների փոխարինում: Ներքին խողովակների փոխարինում: Էլեկտրոլիտների բլոկի խողովակների փոխարինում: Մուտքային Ջրի բոլոր խողովակների փոխարինում: Չափիչ բջջիջների մագնիսների կարգաբերում: c501 մոդուլի զննում, շարժական մասերի կարգաբերում և ամրապնդում: Նմուշառման ասեղի կարգաբերում, մակարդակի զգայունության կարգաբերում: Ազդանյութերի ասեղների կարգաբերում ըստ հարտության, մակարդակի զգայունության կարգաբերում: Ազդանյութերի կասետների տրանսպորտային մեխանիզմի կարգաբերում: Նմուշառման սկավառակի, չափիչ համակարգի սկավառակի ստուգում և կարգաբերում: Բիոքիմիական մոդուլի աշխատանքի ստուգում հատուկ ստանդարտիզացված հեղուկների միջոցով: e601 մոդուլի զննում, շարժական մասերի կարգաբերում: Նմուշառման ասեղի կարգաբերում, մակարդակի զգայունության կարգաբերում: c501 մոդուլի աշխատանքային կայանի ասեղների հավաքի փոխարինում իրենց ներդիրների հետ: Շարժման սենսորների փոխարինում: Ազդանյութերի խառնիչի կարգաբերում, և պտույտների ստուգում: Ազդանյութերի սկավառակի և ինկուբատորի սկավառակի ստուգում և կարգաբերում: Բոլոր շարժական մասերի քսուկապատում: Սարքի աշխատանքի ստուգում հատուկ ստանդարտիզացված հեղուկների միջոցով: Roche Cobas 6000 անալիզատորի համար նախատեսված RBC 44 անխափան սնուցման մարտկոցի տեխնիկական զննում, վնասված մասերի փոխարինում, մարտկոցների մոդուլի վերանորոգում, անխափան սնուցման սարքի կարգաբերում, Cobas 6000 անալիզատորի հոսանքի համակարգի կարգաբերում: Ընդհանուր համակարգի ստուգում ծանրաբեռնվածության թեսթի միջոցով: Սարքին կցված Medica R60 ջրի դեոնիզացման սարքի ֆիլտրերի փոխարինում:	հատ	1	2,880,000	2,880,000	1
3.2	Անհրաժեշտ պահեստամասեր՝				0	
	Դեիոնիզատորի ֆիլտրերի հավաքածու (ներառում է 10 ֆիլտր)	հատ	1	2,200,000	2,220,000	1
	ԸՆԴԱՄԵՆԸ				**5,100,000**	
4	**Հեմատոլոգիական Անալիզատոր Sysmex pocH-100i-ապասարքում և նորոգում**					

4.1	Սարքի ընդհանուր փոշազերծում: Վթարված մխոցի, փականների, կոմպրեսորի և խողովակների փոխարինում: Ներքին տարրաների մաքրում: Լեյկոցիտների, էրիտրոցիտների, տրոմբոցիտների զգայության կարգաբերում հատուկ ստանդարտիզացված հեղուկների օգնությամբ: Փականների փոխարինում: Ներդիրների և զտիչների փոխարինում: Հեմոգլոբինի և հեմատոկրիտի կարգաբերում Շարքից դուրս եկած խողովակների փոխարինում: Սարքի աշխատանքի և ճշգրտության ստուգում հատուկ 3 մակարդակի ստանդարտիզացված նյութերի միջոցով:	հատ	1	360,000	360,000	1
4.2	Անհրաժեշտ պահեստամասեր՝				0	
	AG278808 Փական	հատ	3	70,000	210,000	3
	AV199859 Փական	հատ	3	66,000	198,000	3
	031-0112-4 Մխոց	հատ	1	240,000	240,000	1
	013-2002-2 Կոմպրեսոր	հատ	1	184,000	184,000	1
	023-1961-3 Զտիչ Համար 8	հատ	1	8,000	8,000	1
	ԸՆԴԱՄԵՆԸ				**1,200,000**	
5	**Ավտոմատ մեզի անալիզատոր SYSMEX UF-500-սպասարկում և նորոգում**					
5.1	Սարքի ընդհանուր զզնում և փոշազերծում: Պտտվող կերամիկական փականի մաքրում և կարգաբերում: Նմուշի տեղափոխման, նմուշառման համակարգի մաքրում և կարգաբերում: Նմուշառման խողովակների և ֆիլտրի հենակի փոխարինում: Կոմպեսորի ստուգում, մաշվածության ենթարկված մասերի փոխարինում: Մխոցների ներդիրների փոխարինում, լազերի մխոցի փոխարինում: Վակուումի կարգավորիչի փոխարինում: Նմուշառման փականի փոխարինում: Օդային չորացուցիչի փոխարինում: Ներքին բոլոր տարրաների մաքրում և ստուգում: Սարքի աշխատանքի ստուգում հատուկ ստանդարտիզացված հեղուկների օգնությամբ:	հատ	1	900,000	900,000	1
5.2	Անհրաժեշտ պահեստամասեր՝				0	
	346-9357-8 Մխոցի նեդիր	հատ	1	90,000	90,000	1
	943-2234-1 Լազերի մխոց	հատ	1	120,000	120,000	1
	366-1473-5 Հենակ	հատ	1	10,000	10,000	1
	991-0542-3 Վակուումի կարգավորիչ	հատ	1	190,000	190,000	1
	443-1062-3 Նմուշառման փական	հատ	2	10,000	20,000	2
	443-2606-1 Օդային չորացուցիչ	հատ	1	140,000	140,000	1
	983-3151-5 Նմուշի ֆիլտր	հատ	2	60,000	120,000	2
	443-6865-6 Կոմպրեսորի խնամքի կոմպլեկտ	հատ	1	80,000	80,000	1
	443-6866-0 Կոմպրեսորի խնամքի կոմպլեկտ	հատ	1	70,000	70,000	1
	ԸՆԴԱՄԵՆԸ				**1,740,000**	
6	**Հեմատոլոգիական անալիզատոր SYSMEX XT-4000i-սպասարկում և նորոգում**					
6.1	Ընդհանուր օդի ֆիլտրի փոխարինում: Մաշվածության ենթարկված խողովակների փոխարինում: Մխոցների ներդիրների ստուգում և անհրաժեշտության դեպքում փոխարինում: Ներքին ջրի և թափոնի տարրաների մաքրում; Լեյկոցիտների, էրիտրոցիտների, տրոմբոցիտների զգայունության կարգաբերում հատուկ ազդանյութերի օգնությամբ: Հեմոգլոբինի և հեմատոկրիտի կարգաբերում: Լազերի ստուգում և անհրաժեշտության դեպքում կարգաբերում հատուկ նյութերի միջոցով: Ներքին արյան զտիչների վերանորոգում: Սարքի աշխատանքի ստուգում 3 մակարդակի ստանդարտիզված հեղուկների օգնությամբ: Ռետիկուլոցիտների չափման ալիքի վերանորոգում: Կոմպրեսորի մխոցների փոխարինում և կարգաբերում: Սարքի ծրագրային ապահովման թարմեցում: Սարքի ընդհանուր զզնում և փոշազերծում: Պտտվող կերամիկական փականի մաքրում և կարգաբերում:	հատ	1	840,000	840,000	1
6.2	Անհրաժեշտ պահեստամասեր՝				0	
	AU651830 Օդի ֆիլտր	հատ	1	27,000	27,000	1
	443-1359-8 Արյան ֆիլտրN8	հատ	2	8,000	16,000	2
	442-6483-4 Թափոնի խողովակ	հատ	1	23,000	23,000	1
	CA358738 Սիլիկոնե խողովակ 2x5	հատ	1	41,00	41,000	1
	BK603598 Սիլիկոնե խողովակ 3x6	հատ	1	26,000	26,000	1

	CC148318 Սիլիկոնե խողովակ 3x6.5	հատ	1	49,000	49,000	1
	442-5430-3 Տեֆլոնե խողովակ 3.2x 4.2	հատ	1	12,000	12,000	1
	442-5055-7 Պոլեուրետանային խողովակ 1.8x3.4	հատ	1	11,000	11,000	1
	943-2232-4 Մխոց Համար 8	հատ	1	115,000	115,000	1
	923-8851-9 Մխոց Համար 2	հատ	1	260,000	260,000	1
	132-741-6 Մխոց Համար FCM	հատ	1	380,000	380,000	
	ԸՆԴԱՄԵՆԸ				**1,800,000**	

Հավելված № 3
№ ՇՀԾՁԲ-9/1-2 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Չ/բաժնի համարը	CPV կոդեր	Ծառայության անվանումը	Չ/մ	Քանակ	Միավորի գինը	Ըստ 2017թ.ամիսների /ոչ ուշ քան 10/12/17թ./							Ընդամենը
						VI	VII	VIII	IX	X	XI	XII	
1	*50421100/1/4/1*	***Բշկական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ***	դրամ	1	14,640,000	14,640,000	14,640,000	14,640,000	14,640,000	14,640,000	14,640,000	14,640,000	14,640,000

Ծանոթություն.
* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տնօրեն

ԿԱՏԱՐՈՂ
«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված № 4
ՇՀԾՁԲ-9/1-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատու՝ ի դեմս _____ *և*
*Պայմանագրի կողմը՝ ի դեմս*_____, *հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի № եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

№	Մատուցված ծառայությունների							
	Անվանումը	Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Քանակական ցուցանիշը		Կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված № 4.1
ՇՀԾՁԲ-9/1-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ №

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ——————(Պատվիրատուի անունը)——————ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ——————(Կատարողի անունը)——————ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ——— -ին կնքված № ——— ——————— գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ———— — -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն